ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՁԵՌԱՄԲ ՕԾՎԵՑԻՆ ԱՐՏԱՇԱՏԻ ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՔԵՐԸ

Հոկտեմբերի 29-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգևոր դասի ուղեկցությամբ մեկնեց Արտաշատ՝ կապարելու քաղաքի նոր կառուցվելիք եկեղեցու հիմնօրհնեքի արարողությունը: Սրբազան արարողությանն իր մասնակցությունն էր բերել ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Արտաշատում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին աղ ու հացով: Այստեղ էին նաև Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը՝ թեմի հոգևոր դասի հետ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար Հովիկ Աբրահամյանը, Արարատի մարզպետը, Արտաշատի քաղաքապետը, բարձրաստիճան պաշտոնյաներ:

Արտաշատում քաղաքի առաջին այս եկեղեցին, որ կրելու է Ս. Հովհաննես առաքյալի և ավետարանչի անունը, կառուցվում է նախարար Հովիկ Աբրահամյանի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ: Այն իր ճարտարապետական կառուցվածքով խաչաձև է, ունենալու է մեկ գմբեթ, զանգակատուն և կարող է տեղավորել շուրջ 500 հավատացյալ: Եկեղեցու շինությունը նախատեսված է ավարտել 2 տարի հետո:

Ձեռամբ Վեհափառ Հայրապետի օծվեցին եկեղեցու 16 վեմ-քարերը, որոնք տեղադրվեցին նորակառույց եկեղեցու հիմքում՝ կոչվելով 12 առաքյալների, 4 ավետարանիչների և Գրիգոր Լուսավորչի ու Հովհաննես Մկրտչի անուններով: Թադեոս առաքյալի անվամբ վեմ-քարը տեղադրվեց ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ձեռքով:

Շնորհավորելով ու հայրապետական իր օրհնությունը փոխանցելով Արտաշատի բնակիչներին՝ Վեհափառ Հայրապետը միաժամանակ գնահատանքի խոսքեր ուղղեց նորակառույց եկեղեցու հովանավոր Հովիկ Աբրահամյանին, մարզի ու քաղաքի իշխանություններին և հավատացյալ ժողովրդին:

«Մեր ուրախությունն իր արձագանքն է գտնում երկնքում՝ պայծառ ու գեղեցիկ, արևշող օրվա երևույթով: Աստված, կարծեք թե, նշան է տալիս մեզ, որ օրհնում է եկեղեցաշինության մեր այս նախաձեռնությունը: Որովհետև եկեղեցի կառուցել՝ նշանակում է՝ Աստված ընդունել, նշանակում է՝ ներկայություն դարձնել Աստծուն մեր կյանքի մեջ, մեր հոգիներում և կենցաղում: Նշանակում է՝ միշտ բարու հետևող լինել, սիրով ապրել կյանքը, հավատո գործեր կատարել: Եկեղեցի կառուցել՝ նշանակում է՝ հավատարմություն դրսևորել մեր հայրերի սրբազան հավատքին, մեր անցյալի հոգևոր ժառանգությանը, սիրել մեր հայրենին և նախանձախնդիր լինել նրա վաղվա օրվա նկատմամբ՝ իրականություն դարձնելով բոլոր այն երազները, որոնց համար ապրել ենք, պայքարել ու մարտնչել, երբեմն էլ մարտիրոսվել ու նահատակվել»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հիմնարկեքի սրբազան արարողությունից հետո օրվա խորհուրդն ամբողջացվեց տոնախմբությամբ՝ երգ ու պարով, արտասանություններով ու սրտաբուխ խոսքերով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՇՈՒՏՑՔՍԻՄՈՆԻ ԿՈՂՈՍՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՊ ՍՏԱՆԼՅԵՆ ՎՈՒՆԴԵՐԸ
ԸՆԹԱՑՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՈՒՄ

ՀՀ ԳԱԱ Գրադարան

ԵՐԵՎԱՆԻՆԵՐԻ ԽՈՒՐԻ ՄԻՄՈՒՄԸ

ՊՈՒՄՊԻՈՒՄՈՒՄ Պ.ԿԱՊՈՒՏՅԱՆՈՒՄՆ Է՝ Պ.ՍՈՒՐՄԱՆՈՒՄ ՊՈՒՍԻՍՈՒՄԻ ԿՍՑԵԼԻԿԵ Է ԼԵՎՈՆ
ՄՈՍՈՒ ԿՍՈՒՅԼԻՕ ԿՏԱՊՈՒՅԵՆՔ ՍՈՓՈՒԿԱՆ ԺՈՒՍԻՍԳԸ ՇԻԿԵՍ ՑԿՍԳՍՈՒՔՈՒԵՆ 91 ՔԱՂԱՔԻՄԻ ՊՍՍՔՍԻՍ ԿՍՑԵԼԻԿԵ
ՑԿՊՍՑՔՍԻՍՍՍՈՒՄ ՊՈՒՄՍ ԿԱՄՈՒՍԻՍԻՍ ՉՈՒ ՊՍ ՍՍ